«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

“BLEJAN”
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

ԲԼ–Գ–025-22 19.08.2022

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմինդյանին

Հարգելի պարոն Սիմինդյան,

Ինչպես արդեն տեղյակ եք, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից ֆինանսավորվող EU4Sevan ծրագրի շրջանակներում ներկայումս իրականացվում են տարբեր գործողություններ ու ենթածրագրեր: Ծրագրերից մեկը «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Սևանա լճի խորհուրդ» տեղական սուբսիդիայի ծրագիրն է, որի շրջանակներում, այս փուլում, հետազոտվում և քարտեզագրվում են Սևանա լճի վրա ազդեցություն թողնող և լճից ազդեցություն կրող բոլոր շահագրգիռ կողմերը: Քարտեզագրման ընթացքում Սևան ԱՊ-ի տարածքում գտնվող Նորաշենի արգելոցի մեջ մտնող Որորների կղզու տարածքում արձանագրել ենք հարյուրավոր խոշոր եղջերավոր անասունների մուտք ցանկապատից ներս՝ արգելոցի տարածք, ինչպես նաև՝ որոշ քանակով լիճ (կից 2 լուսանկարներ, անհրաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել տասնյակ նմանատիպ լուսանկարներ): Որորների կղզում հանդիպեցինք պահպանություն իրականացնող 3 աշխատակցի, ովքեր մեր այն հարցին, թե արդյո՞ք իրավունք ունեն կենդանիները գտնվել լճին այդքան մոտ և շատ հաճախ նույնիսկ լճի մեջ, կամ արգելոցի տարածքում առհասարակ, նրանք պատասխանեցին, որ նոր որոշում է առկա, ըստ որի այդ կենդանիների տերերը պայմանագիր ունեն Սևան ԱՊ-ի հետ, որի շրջանակներում էլ ստանում են այդ իրավունքը, այն է՝ կազմակերպել արածեցում և կենդանիների ջրում, քանի որ համայնքները արոտավայր և խմոցներ չունեն:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ ես, որպես պատասխանատու մարմնի ներկայացուցիչ, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

- Ի՞նչ օրենքով կամ որոշումով է թույլ տրված նմանատիպ գործունեություն Սևան ԱՊ-ի, մասնավորապես արգելոցի տարածքում(տրամադրել որոշումը, եթե առկա է),
- Եթե առկա է նման որոշում, ապա քանի՞ նմանատիպ պայմանագիր կա,
- Առկա՞ է արդյոք մոնիտորինգ առ այն, թե ինչ ազդեցություն են թողնում լճի վրա ամեն օր, օրը երկու անգամ (ժ. 12:00-ին մոտ և ժ. 18:00-ին մոտ. այս ժամերը կարող են շատ քիչ փոփոխվել) այդ կենդանիների մուտքը Սևանա լիճ,
- Արդյո՞ք չկան նմանատիպ արտոնություններից օգտվող այլ տնտեսվարողներ Սևան ԱՊ տարածքում: Եթե կան, ապա հայտնի՞ է, թե քանիսն են, ի՞նչ հաճախականությամբ ու ի՞նչ քանակի այցելուների է թույլատրվում լաստանավով (https://fb.watch/e_PLpviZG2/) նավարկել Որորների կղզի, որը պաշտոնապես Սևան ԱՊ-ի Նորաշենի արգելոց հատվածն է ներկայացնում:
- Բացի հայկական որորներից, տարածքը լի է նաև այլ թռչուններով), կա՞ն արդյոք սահմանափակումներ և ինչպե՞ս է կատարվում այդ գործողությունների կատարման վերահսկողությունը, ինչպես նշված է, օրինակ,

Նորաշենի արգելոց այցերի նոր կարգի մասին պատմող այս տեքստում https://lakesevan.am/blog/norasheni-argeloci-mutqi-nor-kargy

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել տվյալ հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Լիաննա Ասոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
REPUBLICOFARMENIA
DEPUTY MINISTER OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 2/07.2/11953
«26» «08» 2022թ. __

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի նախագահ Լիաննա Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2022թ. օգոստոսի 19-ի N ԲԼ-Գ-025 հարցման՝ հայտնում եմ, որ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի «է» ենթակետի և 17-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ արգելոցի և ռեկրեացիոն գոտու տարածքում արգելվում է անասունների արածեցումը: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը «Անասունների արածեցման» նպատակով պայմանագրեր է կնքում միայն տնտեսական գոտու տարածքում արածեցում իրականացնելու համար: 2022 թվականին կնքվել է «Անասունների արածեցման» 39 պայմանագիր:

Լաստանավով մոտենալ և նավարկել Նորաշենի արգելոցի /այսուհետ՝ Արգելոց/ ջրային տարածքում ևս արգելված է: Մինչև 2022թ. հունիս ամիսն Արգելոցի մուտքն արգելված է եղել և իրականացվել է խիստ հսկողություն, սակայն Արգելոցի համար մշակվել է «Նորաշենի արգելոցի և արգելավայրի կանոնակարգ» և «Նորաշենի արգելոցի և արգելավայրի մուտքավճարի սահմանման կարգ», որոնք ներկայացվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդին և հաստատվել վերջինիս կողմից 2022թ. հունիսի 14-ին:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և Արգելոցի կանոնակարգով սահմանված են Արգելոցի պահպանության ռեժիմը և սահմանափակումները:

Նորաշենի արգելոցում շուրջօրյա հսկողություն իրականացնող «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հատուկ նշանակության հսկիչներն Արգելոցի տարածքում ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու, քաղաքացուն ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելու համար օգոստոսի 24-ին ենթարկվել են կարգապահական տույժի՝ նկատողության:

26/08/2022

X

ԱՐԱՄ ՄԵՅՄԱՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: MEYMARYAN ARAM 2412830247 Արամ Մեյմարյան

Հասարակայնության հետ կապերի բաժին Ա.Սուքիասյան 011 818 559

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
deputymin560@env.am | www.env.am
+374 11 818560 | +37411 818506